ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3506-Ա « 15 » հուլիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի Հ.4937-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով, հաշվի առնելով քաղաքացի Անահիտ Մելքոնյանի 11.05.2026թ. հ.Դ-47478-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2012 թվականի հունիսի 29-ի «Ինքնակամ կառույցի օրինականացման մասին» հ.4937-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 2-րդ կետում՝ «անձնագիր AG0555245, տրված 008 կողմից 21.10.2005թ.» բառերը փոխարինել «անձնագիր AU0412726 տրված 008 կողմից 11.11.2020թ.» բառերով.

2) Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի բյուջեի հ.900015211262 և գանձապետական հ.900015211254 հաշիվներին 11.05.2026թ. մուտքագրված համապատասխանաբար՝ 4020188 (չորս միլիոն քսան հազար մեկ հարյուր ութսունութ) դրամ և 8108457 (ութ միլիոն մեկ հարյուր ութ հազար չորս հարյուր հիսունյոթ) դրամ գումարները վճարված լինելու հանգամանքը, 30-օրյա ժամկետում Անահիտ Մելքոնյանի հետ կնքել կառույցի և դրա համար առանձնացված հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:»:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ